



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա Ղ Բ Ա Յ Ա Ղ

Խ Ո ՐԵՆ Ա Ց Ի Ն

Ի ՑՈՒՑԻՒԹԱԾ ԵՒ ՑՈՒԱԿԱՆ

—○—○—○—

Գ ր ե ց

Խ ՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Հ

—○—○—○—

Վ Ա Ղ Ա Ր Ե Ս Պ Ա Տ

ՏՊԱՐԱՆ Մ. ԱԹԱՋՈՅ Ս. ԷԶՄԻԱՆՆԻ.

1902

891.99
Խ-97

Հրատակ մեջ ուն.

891.99

12 դեկտեմբեր 1902

Խ.

Մ. Ա. Կառ.

ՈՂԲԱՑՈՂ

այ

ԽՈՐԵՆԱՂԻՆ

Ի ՅՈՒՏԵՐԱԾ ԵԿ ՅՈՒՏՎԱՆ

10005
10006

Գրեց
ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ



ՏՊԱՐԵՎՈՍ Մ. ԱԹ-ԱՊ-Ա. Ա. ԷՇՄԵԱՆԻ

1902

891.99
Խ-97

14 MAY 2013


34920

6 NOV 2011

ԱՂԲԱՑՈՂ ԽՈՐԵՆԱՑԻՆ

Կ Յ Ա Շ Տ Տ Ա Տ Ե Կ Յ Յ Ա Ռ Ե

Доаволено цензурою. г. Тифлисъ,
14 Сентября 1902 г.



433-75

Ո՞վ էր այն հարուստ փարթամ,
Ո՞ր յԱթենայ ծովափէն դայր,
Բեռնաբռեալ նաւ շահաբեր;
Թանգար էր նա ճոխ գիտութեան,
Ամենաբռեստ և թանկագին,
Մարդրիտ գոհար էր իւր վաճառ,
Զրի բաշխէր, ով որ խնդրէր,
Եւ փոխարէն չառնոյր ովնչ;
Հրաւէր կարդայր նա բարձրագոչ,
Առէք, ասէր, կղերք չայոց, ||
Առէք մանկունք ուսման կարօտ,
Դանձ անկապուտ է իմ վաճառ,
Ոչ ոք կարէ հանել ձեզմէ:
Ո՞հ, ով լսեց նորա հրաւէր,
Եւ ով գնեց իւր մարդարիտ,
Աւազ, ոչ ոք և ոչ մի:
Որ փարթամ էր ամենաճոխ,

Զքաւորեալ աղքատացաւ:
 Մշոյ երկիրն էր հայրենիք,
 Իւր խանձարուրն էր Խորհոյ դեղ,
 Չունէր նա տուն և օթևան,
 Աստանդական շրջէր թափառ,
 Յուան ի ձեռին, պարկն ի յուսին,
 Դեգերում էր Հայոց աշխարհ,
 Չունէր հանդիստ և կայան,
 Քիմատոսին էր նմանակ,
 Զկար տեղի գլխոյն դադար:
 Ո՛վ էր այս մարդ, ոհ, մոռացեալ,
 Ազգի զաւակ իւր Ազգէն,
 Դեռ չմոտծ ի գերեզման:
 Ասա դու ինձ, ով ազգ Հայոց,
 Թէ ամաչես ասել զանուն,
 Միթէ կարես թագուցանել.
 Աշխարհ գիտէ նորա անուն,
 Արեւելքն մինչ արևմուտք
 Ուկի տառով է քանդակուած,
 Եւ պատմութիւն արձանագրած:
 Ասա յայտնի խոստովանիր,
 Դէթ քաւեսցես քո նախնեաց մեղք:
 Եւ ես առեմ քեզ, գու ծանիր,
 Քերթողահայր փիլիսոփայ,
 Խորենացի Մովսէսն էր այն,
 Անծանօթ և ծանուցեալ,

Այլ ո ծանեաւ այդ անդին գանձ.
 Յայտնի շրջէր և չէր ծածկեալ.
 Զոր չտեսին կուրաց աշը:
 Ասեն երբեմն և շատ անդամ
 Խորենացին լինէր անյայտ.
 Եւ ուր էր նա, ի յԱշտիշատ ի յԱշտիշատ,
 Սուրբ Սահակց գերեզման,
 Ուր օրերով և ժամերով
 Սուրբ տապանին առաջ չոգած.
 Զայնարկեալ ինքնախօսէր,
 Նա լայր ուժդին բան ստեղծէր,
 Գերեզմանին հետ խօսում էր:
 Մինչ խայտայի յուսով ի դարձ,
 Բիւզանդիոնէն Հայոց աշխարհ,
 Հոգիս հրճուէր, զուարթ ուրախ,
 Ո՞հ, չտեսի զքեզ ողջամբ,
 Ողջագուրիլ ի քէն, սուրբ Հայր.
 Գերեզմանիդ հասի, աւազ,
 Գլուխդ վեր առ գերեզմանէդ,
 Տես կարօտով քո որդեգիրկ,
 Յառաջագէմն եմ քայդ Մովսէս.
 Ո՞հ, մնացի ես որբացեալ:
 Ոչ պաշտպան, ոչ խնամոկալ,
 Ոչ տուն ունիմ, ոչ օթևան,
 Առ զիս ի քո գերեզման:
 Ո՞ տայր ինձ որ ննջէի

Քո սուրբ շիրմիդ գլուկարան,
 Եւ հանգչէն խոնջեալ սուկերքս
 Ի քո ծոցիդ հայրական։
 Անտերունչ, անհանդիստ եմ,
 Վաստակաբեկ եղայ սուրբ Հայր,
 Եւ չդտի յարդող ուսման,
 Եւ ոչ երբէք ոք մեկենաս։
 Ես հալածեալ եմ հալածեալ,
 Միթէ օտար եղէ ես ո՞չ,
 Իմ հարազատ եղբայրներէս,
 Կամ որպէս խորթ օտարածին,
 Հայաստանի Մօրն իմոյ։

Եւ ոյք էին իմ հալածիչը,
 Շմուէլի և Բրքիշոյ
 Ապաշնորհ ժանտ որդիքներ,
 Անարժանք յանարժանից
 Կաշառատրօք ձեռնադրեալք,
 Որք եղծին աղարաեցին
 Աստուծոյ տան վայելցութիւն։
 Եւ մեր սուրբ հարց կարդն ու կանսն,
 Որ չարագոյն քան սատանայ
 Հակառ էին և թշնամիք,
 Սահակ Պարթեկի հօր
 Հոգեծնունդ որդիքներուն,
 Եւ նա չէր ողջ հոգին հզօր
 Որ պաշտպանէր իւր բարձր աջով։

Համբուրէր, համբուրէր
 Սահակայ հօր սուրբ գամբարան,
 Ելնէր ապա և ուր երթայր,
 Ի յօշական ի յօշական
 Սուրբ Մեսրովպայ գերեզման,
 Մտնէր մատուռ գրկէր տապան,
 Նոյնաձայն եղանակաւ,
 Կրկնում էր նա մեծահառաչ
 Յաշտիշատի ողբերդականն։
 Ովկ հրաշալի գոլրութեան Հայր,
 Դու գիր տուիր և գոլրութիւն,
 Գիր չի սիրեր Հայոց ազգ,
 Անսիրող է իմաստութեան,
 Հոգին հպարտ և բարձրայօն։
 Ես ձայն բառնամ առ գերեզմանդ,
 Գերեզմանէդ խօսիր հետ ինձ,
 Ես Մովսէսն եմ քո աշակերտ,
 ՅԱթենական ճեմարանէն
 Ողջամբ գարձայ ես Հայաստան,
 Եղուկ ինձ չդտի ես ողջ
 Սահակ Մեսրովպ զոյգ ամոլներ.
 Որ հերկեցին Հայոց գաշտեր,
 Հայ գոլրութեան գարաստաններ.
 Յանեցին սերմն գրոց ուսման,
 Հունձ բարձրացաւ հասունացաւ.
 Եւ ուր է արդ հնձող մշակ,

Ժիր մշակ եմ գերանդաւոր,
 Աշխատաւոր ձրի անվարձ,
 Հաց բերան և այլ ոչինչ:
 Լայնատարած Հայոց գաշտեր
 Աւաղ, մնացեր են կորդացա՞:
 Միթէ ի զժւր աշխատեցայ
 Ես դպրութեան մշակ Մովսէս,
 Տքնելով տիւ ու դիշեր
 Քերթող եղէ և վերաբան.
 Ո՞հ ընդունայն եղեւ վաստակս,
 Եւ ես մնացի անգործ պարապ:
 Թող այս, գանգատ բառնոմ քեզ հայր,
 Մեր հացալից Հայոց գաշտեր,
 Եւ նիրակայ լիք ամբարներ
 Չեն բաւական կարօտներուն.
 Խեղճուկ Մովսէս լիութեան մէջ
 Մնացեր քաղցած և նօթիւ:
 Մինչ շրջէի շուարած մոլոր,
 Հասայ մի շն գիւղի մօտ,
 Թաժա հացի հատ առի ես,
 Եւ հոտին հետ դնացի այն տուն,
 Շիտակ մտայ ես ի տանտուն¹⁾,
 Տանտկին մամիկ հաց էր թխուր.

1) Տան միջի այն որոշ տուն կամ ունեակ,
 ուր թոնիր կայ, Վանեցիք տանտուն կասեն:

Ես կանգ առի թորվան մօտիկ,
 Կոռիկ ցպոյս վէրէն յենած,
 Ասի ովզոյն քեզ տանտիկին,
 Ճամբորդ եմ ես յոդնած դադրած,
 Երկու օր է հաց չեմ կերած:
 Բարի տանտկին ինձ գթացաւ,
 Ասաց արի նստիր հանգիստ.
 Թորվան կշտին և տաքացիր.
 Վահ, կը դողաս ցուրտ ձմեռ է:
 Առ քեզ տաք տաք լոշ լոշ հացեր,
 Թորվան կողէն նոր եմ հաներ.
 Տանտկին ասաց իւր հարսներուն,
 Բերէք աման մի թանապուր,
 Մի պնակ էլ եղով թանհուս¹⁾).
 Թող ուտէ խեղճ ծերունին,
 Օրհնէ զձեզ որ շատ ապրիք:
 Եւ անաշէն տանտկին լինիք:
 Ես կը կերայ քաղցած քաղցած,
 Մշոյ կանգուով էր այն եփուած:
 Օ՞խ, ի՞նչ անուշ էր թթու թան,
 Անօթի մարդոյն համար
 Թթուն քաղցը է մեզրի նման:

1) Թանհուս, ալբով և հարած թանով
 եփած ձաշ, որուն վերայ իւղ ածելով կուտին,
 ձերոց համար վախուկ կերակուր է:

Հարցուց մամիկ ու ես հագեր
Սնբախտի ես թէ կրօնաւոր.
Եւ կամ սգւոր, մեռել ունիս:

Ասի մամիկ վարդապետ եմ,
Սուդ ունիմ ես մինչև ի մահ,
Երկու մեռել ունիմ մեծ մեծ.
Թագւո՞ մեռաւ, Պապը մեռաւ,
Եւ Հայոց տուն անտէր մնաց:

Բայց միամիտ պարզ տանտկին
Թէ ինչ էր բան, նա չխացաւ,
Ո՞վ էր թագւոր, ով էր պապիկ.
Եւ ինչ փոյթ էր գեղջուկ կնկան
Մեր աշխարհի բան իմանալ,
Երբ անխորհուրդ իմացող միտք
Անմատացան և չխացան:
Ախտացեալ Արտաշիրէն
Տիրական թագն Արշակունի
Ո՞հ, կապեցին խելակորուսք
Նախարարք ազդին Հայոց,
Եւ ում դլուխ դրին դիտէք,
Գաղանին և վարազին,
Որ երկաթի ժանիքներով
Պատառեց և խորտակեց,
Տիրադրուժ ապիրատներ:
Յետոյ յետոյ սորջացան,
Երբ յաճախեց հիւանդութիւն.

Վաղվաղեցին առ Մեծ բժիշկն
Կորիդլուս խոնարհելով,
Պաղատէին մեծագոչ:
Ո՞վ, Հայրագութ դու մեր հովիւ,
Մեղայ գոչեմք առաջի քո,
Մեք թիւրեցանք քո սուրբ իրատէն
Վաճառեցինք ազատութիւն.
Ստրկացանք յիմարաբար,
Սրդ արհաւիրք անհնարին
Թէ ի ներքուստ թէ արտաքսոս
Մեղ պաշարեր է յամենուստ,
Մահաստուեր հիւանդութիւն
Հրապաշտ ազգին հուր ճարակեալ
Վառեց լափեց ողջ Հայոց տուն:
Ո՞հ, մեռանիրք, մեռանիմք,
Դեղ ու գարման ժտեմք, Սուրբ Հայու:
Մեծագործ Սահակ Պարթի,
Յոգւոց հանեալ խորոց սրտէն,
Պատասխանեց իւր վերջաբան:
Հիւանդութիւն առ ի մահ է,
Եւ չէ նման Պաղարոսին,
Ո՞հ, ես չունիմ դեղ ու գարման,
Դուք բացեք գուռ ձեր կորստեան.
Եւ ով կարէ փակել դայն:
Դուք մահ բերիք Հայոց աշխարհ,
Դուք մեռուցիք ազատութիւն.

Եւ տի մեռնիք ստրկութեամբ,
Դուք մեզապարտ Արտաշիր,
Հանիք ատեան որ ես գատիմ,
Քրիստոսի բան յուշ առնեմ ձեզ,
Թէ ով ձեզմէ արդար, սուրբ է
Թող քար արկցէ Արտաշիրին:
Հաղար անգամ աղաչեցի,
Որ իմ հօտին հիւանդ ոչխար,
Դուք մի փոխէք գաղանին հետ,
Որ կարծէք թէ առողջ է,
Հոգւով հիւանդ անհաւատ է,
Զառիք ի միտ կնիք հաւատոյն
Աւազանին մկրտութեան:
Հինաւուրց Աշաբատի,
Բարձր կազնի ծառի վերէն,
Բոյն էր դրել մեծ Արագիլ,
Պարթեական Արշակունիք:
Հայ ժողովուրդ դերթ ճնճղուկ,
Ապաւինէր բունին ի շուրջ:
Բոյն քանդեցիք մեծ արագին,
Եւ նետահար արտրիք զայն.
Թռաւ դնաց վիրաւոր,
Ո՞հ, արագիլ, արագիլ,
Էլ չը դարձաւ նա ի յետու:
Առիք տապար, հարիք ուժգին,
Ծառն արմատէն տապալեցիք,

Շուք հովանին բարձիք երկրէն,
Արեապաշտ ազգին կրակ,
Պիտի վառէ զձեղ չարաշարու-
է, դուք անդօր ճնճղուկներ,
Ո՞ւր տի դանիէք ձեր ապաւէն.
Եւ ես գիտեմ դուք զինչ առնէք:
Սնմիաբան բաժան հոգին,
Քանդել է զձեղ միութենէն,
Դուք կրարմէ անջատ, անկախ,
Անմատչելի բարձանց վերէն,
Դնէք ձեր բոյն ինչպէս Արծուի,
Եինէք ամուր ամուր բերդեր,
Եւ անձնապահ ապաստանիք:
Իսկ Հայոց տուն և ժողովուրդ-
Լքեալ թողուք բաց անտերունչ,
Մեր հայրենեաց թշնամոյն սոք,
Կոխեն, ճմիեն ինչպէս խաղող:
Եւ ինչ փոյթ ձեղ խեղճ ժողովուրդ.
Դուք ապահով էք ապահով,
Յուշ, յուշ առնեմ ձեղ չար հետեանք,
Եւ չարագէպ մութ ապագայն.
Դուք մոլորեալ անհեռատեսք,
Զառնուք ի միտ վախճանին ելք:
Այլ ես այժմէն գուշակեմ ձեղ,
Այն չարաբեր դժպատեհ օրն,
Երբ աւերի երկիր Հայոց,

Եւ չքանայ Հայ ժողովուրդ,
 Ամայանայ մեր հայրենիք,
 Դուք ու իշխան լինիք, ասէք,
 Անշուշտ և զուք ի միտունին
 Ժողովուրդին հետ կորնչիք:
 Պատգամախօս մարդարէն,
 Զայն կուտար Յակոբայ տան,
 Ո՛վ իսրայէլ իսրայէլ,
 Քո կորուստ քո տնէն է,
 Եւ ոչ երբէք օտարէն:
 Նոյն և ես կրկնեմ այսօր,
 Ո՛վ, անլող տուն Հայոց,
 Կորուստ քո միշտ ի քէն է
 Ո՛չ Պարսկէն և ոչ Յոյնէն:
 Այլ զուք որդիք եղջերիկ
 Խցիք ամուր ձեր ականջներ,
 Որ չը լոէք Հօր խրատներ.
 Այսուհետեւ կերիջիք դուք
 Դառըն պտուղ ձեր արդեանց:
 Գնացէք գնացէք, ով նախարարք
 Ես վշտահար եմ վշտահար,
 Զիս մի առնէք անհանգիստ.
 Ապաշտաւանք ապաժամ է:
 Թողէք ողբամ ես զիսրուստ
 Արշակունեան թագին հզօր.
 Թողէք ողբամ ես զթաղումն,

Ատրկութեան գերեզմանին.
 Երկնային արդարութեան,
 Թաթն գրեց ինձ յանդիման,
 Որպէս անդ ի Բաբելոն,
 Բաղդասարի պալատի յորմ,
 Ես կարգացի, ողբացի յոյժ,
 Դատավճիոն արձակուած է,
 Ազատութեան թագ վերացու,
 Եւ Հայաստան ստրկացաւ:
 Անցելոյն այս յիշատակ
 Երբ յուշ գան ինձ, լինիմ անյուշ,
 Սիրոս և հոգիս իմ տոչորի,
 Թողում անցնիմ բանիս կարգ:
 Ասի տանտիկին, մնաս բարով,
 Օրհնեալ լինիս դու և քո տուն,
 Աշխատաւոր զաւակներով,
 Հարսներով և թոռներով.
 Աբրահամու տան օրհնութիւն
 Աստուած թափէ քո տան վերէն
 Գեղացու տուն թող շէն մնայ,
 Դէմ հիւրերուն միշտ բաց լինի:
 Մամիկ իննդրեմ քեզմէ մի բան,
 Ճամբաս երկար է, շատ երկար,
 Տուք ինձ քանի մի թաժա հաց,
 Դնեմ ի պարկ ճամբուս պաշար:

Ասաց մամիկ իւր հարսներուն,
կեօնդ մի փոխինդ պատրաստեն շուտ
ծամաք հացին հետ թող ուտէ,
ծնորհակալ եմ, ասի մամիկ,
ելոյ տնէն ես ի գուրս
Հպարտ հոգիս իմ յուզուեցաւ
Այնչափ կարեմ ես հեղանալ
Նման երկնաւոր Վարդապետին
Աստ ես լացի դառն իմ վիճակ,
Կրկնեցի նոյն ողբերդ ականս,
Ողբամ զըեղ Հայոց աշխարհ,
Մովսէն եղեր է մուրացկան:


Տմարդի յուրտ իմ եղբարք,
Զիս դուրս հանին սեղանաւոնէն.
Որք ուտէին լի կշտապինդ
Ժողովուրդին սեղանէն.
Ասեն Մովսէս Հայ ժառանդ չէ,
Աթենացի Յոյն է նա,
Չունի բաժին մեր սեղանէն:
Ես համարին հայրենակից,
Մշոյ երկրի զաւակ Մովսէս,
Ժողովուրդի լի սեղանէն
Ո՞հ, զրկեցին ու մերժեցին,
Եւ ես մնացի կարօտագին:

Թէ վանականք վակեցին դուռ,
Բաց էր քո դէմ արձակ արձակ,

Մեր հիւրասէր գիւղացւոց դուռ,
Հէր դու տրտունջ հանես, Մովսէս,
Թէ կարօտ եմ, և յոյժ կարօտ,
Ո՛ տայր ինձ հաց և կերակուր.
Ես մարդ եմ, հացով կապրիմ,
Չեմ ես հրեշտակ անկերակուր:

Ո՞վ սիրահար դու դպրութեան,
Ի՞նչ փոյթ էր քեղ թէ ջուր թէ հաց,
Թէ փակ էր քեղ վանքերու դուռ,
Թող երթայիր Խորնոյ քո գեղ,
Հայրենի տուն հանդիսու էր քեղ:
Միթէ վազուց մեռած էին
Հայրենի տան ողջ ընտանիք,
Եւ տուն անշէն էր մնացեր:
Դու խաչակիր և ուխտագիր,
Վաղ իսկ թողիր և մոռացար
Հայրենի տուն, յոր դու ծնար,
Ուր կապեցին քո խանձարուր,
Եւ կնքեցին Մովսէս անունդ:

Հայ ժողովուրդ չէ մոռացել,
Աւանդաբար խօսի նա բան,
Քանի գժար է հաւատալ,
Թէ մեր Մովսէս Խորենացին
Հոգեստահիկ հացին կարօտ,
Թողեր գրիչ, թողեր գրքեր,



Գնացեր ջաղցպան է եղեր։
Լուր տարէք և աւետիս
Առ վանական եղբարս ուխտին,
Թող ցնծան, ուրախ լինին,
Քերթողն եղեր է ջաղցպան,
Թողեր գրիչ, առեր կռան,
Զաղցի քարերն է սրում։
Որ ուսուցիչ էր և կըթիչ,
Քերթել զմիս Հայոց մանկաւոյն,
Աւաղ, իբրև անուս գեղջուկ,
Արդ ջաղցին է ծառայում։
Արտ արագ պայտ առէք
Իմ ապաւէն ջաղցի քարեր,
Մանր աղացէք, ալուր ածէք,
Հայ պատրաստէք Հայոց աղդին,
Դեռ նա միայն հացով կապրի,
Զէ պէտ ասէ բան և ուսումն։
Եւ վանական կրօնաւոր հարք
Նոյն կրկնելով քարոզէին,
Զի փոյթ է մեղ խոր գիտութիւն,
Լինել բանդէտ Ֆիլիսոփոս,
Բաւ է և շատ Դաւթին սաղմոս,
Զոր ի բերան առեալ ասեմք,
(Այս առանց միտ առնելու)
Թէ ի խցին և տաճարին,
Տիւ ու գիշեր պաշտեմք զՏէր։

Այլ ինձ այսպէս վիճակեցաւ,
Ի ջաղցին պաշտել զՏէր։
Նոյ արդար ի տապանին,
Որ տատանէր ջրոց վէրէն,
Ի տատանման պաշտէր զՏէր,
Մինչեւ տապան դադար առեց
Մասեաց գլուխ նաւահանգիստ։
Աբրահամ մեծ նահապետ,
Թէ ի վրանին թէ ի դաշտին,
Բացօթեայ երկնուց առաջ,
Մեծ հաւատով պաշտէր զՏէր։
Յակոբ ծառայն Աստուծոյ,
Ի Բեթէլին պաշտէր զՏէր.
Ուր տեսանէր տեսիլ հրաշքին.
Աստուած իջերէր ի Բեթէլ,
Իւր ծառային օդնական.
Սնարին քար կանդնէր արձան,
Եւ օծելով սրբագործէր.
Ի յիշատակ սուրբ տեղին։
Եւ գեղեցիկըն Յովսէփ,
Դաւաճանեալ եղբայրներէն,
Եղիպտոսի խաւար բանտին,
Պաշտէր Աստուածն իսրայէլի։
Մինայի անապատում,
Ուր Մորենին ըոցավառէր.
Հովիւ Մովսէս կօշիկ հանէր,

Եւ ավշելով պաշտէր զՏէր:
 Վիրալից նահատակ Յօր,
 Լքեալ թողեալ ընտանիքէն,
 Վէր աղբիւսին օթագայէր,
 Անյուսահատ պաշտէր զՏէր.
 Պայքար մտաւ ոսոխին դէմ,
 Յաղթանակեց սատան չարին:
 Դանիէլ ի Բաբիլօն,
 Իւր պալատի պատուհանէն,
 Որ հայէր դէպ Երուսաղէմ,
 Աղօթէր առ սուրբ տաճար,
 Ում արգելուած էր աղօթել:
 Յօնան փախչող Մարգարէն,
 Հմբոնեցաւ ի մեծ կիտէն,
 Ի խոր ծովուն ձկան փորէն,
 Աղաղակէր պաշտէր զՏէր:
 Իսկ Յիսուս խաչին աւուրս,
 Սողոմնին տաճար թողուց,
 Իջաւ պարտէղ Գեթսէմանի,
 Զիթաստանեայց ծառերուն տակ,
 Աղօթելով պաշտէր զհայր:
 Հապա մոռնամ մեր լուսատուն,
 Լուսաւորիչ Հայոց աղդին.
 Որ անլոյս և անարև,
 Արտաշատի խոր վիրապին.
 Անօրինակ ճղունս կրէր.
 Գետնի տակէն պաշտէր զՏէր.

Վաշ Երջանիկ եմ Երջանիկ,
 Յորեկն արև դիշեր լուսին:
 Երկնից անհուն ցոլցու աստղունք,
 Հապա Երկրիս վայելչութիւնք,
 Դաշտեր լեռներ ծառն ու ծաղկունք,
 Կարկաջահոս աղբերակունք,
 Արաքս, Եփրատ գրախտի գետեր,
 Չմոռնամ և իմ ջաղցի առուն,
 Ուսինաղարդ և զովաշունչ,
 Եւ Երաժիշտ Երգող թոշունք,
 Որ սփոփեն սիրս իմ տխուր:
 Եւ այս ամէն Ես վայելեմ,
 Եւ փառըս տամ ստեղծողին,
 Գետնի Երես ի ջաղացին,
 Ուրախութեամբ պաշտէմ զՏէր:
 Աղօթարան է տիեզերք,
 Ուր որ լինի մարդ Երկնուց տակ,
 Կարէ պաշտել իւր Տէր Աստուած:

Է՛ ջախջախիկ, ջախջախիկ,
 Հետ քեղ խօսիմ անխօս փայտիկ
 Դու իմ ջաղցի խօսնակն ես,
 Զէնդ անդիւր է, բայց աղբարար.
 Երբ լսեմ ձէնդ ապահով եմ,
 Թէ իմ ջաղաց սազն է բանում,
 Իսկ Երբ կտրի ձէնդ ականջէս,

Ես խոր քնէն զարթնում ի վեր,
Ո՞հ ջաղացին ջուրն է կարեր։
Այսօր տօն է Ծննդեան,
Արի հետ քեզ տօն կատարեմք.
Չունիմք տաճար մեք փառաւոր,
Ի ջաղացին կատարեմք տօն.
Ես վարդապետ, դու էլ դպիր,
Ես երդեմ զիմ Շարական,
Խորհուրդ մեծ և սքանչելի,
Աստուած իջեր է ի մսուր,
Դու էլ երդէ քո կուկուկուն,
Երրորդ պահն է դիշերուան,
Խօսիր հաւիլ, կրկնէ երիցս,
Թէ իմ եղբարք ուրացան զիս.
Երանի թէ, Պետրոսի պէս
Յետ ուրացման գային ի զեղջ,
Լային լային դառնապէս:
Ոչ լացին, ոչ զլջացին,
Ոչ յիշեցին ոչ հարցուցին,
Ո՞ւր է Մովսէս, չէ ի միջի։
Մի որոնէք զիս ի տաճար,
Հանդիսադիր տօնակատար,
Դասակից ընդ իւր եղբարս,
Հրաշափառ սուրբ Յարութեան
Տօն կատարէ երդակցելով,
Աւետիս տայ ցնծութեան,

Քրիստոս յարեաւ ի մեռելոց։
Մի որոնէք ի ձեմարան
Եւ կրթարան Հայոց մանկաւոյն
Հայկական և Յունական
Ճոխ դպրութեանց զեկավարող։
Ուսուցանող և վերծանող
Նոր արուեստիւ Աթենական։
Այլ ելէք դուք ի ծարօն,
Յաշտիշատ, Եփրատին մօտ
Ի ջաղացին դաէք Մովսէս.
Միթէ կարէք զիս ճանաչել,
Հնոտի ցնցոտ եմ սեւզգեստ
Ալրի փոշով է ծածկուեր,
Ես չեմ մառնաշ զիրն ու զրիչ,
Դեռ ևս տքնիմ ես անպարտ,
Սնդադար Ջախջախի ձայն
Զի շփոթեր միտք իմ աղատ,
Ինչպէս մարդոց չար լեզուներ։
Պատմութիւն Հայոց ազգին,
Գրել ինսդրէ Բագրատունին,
Եւ ուր գրեմ, ի ջաղացին,
Ուր չիք դարան և ոչ մատեան։
Ես ողբ գրեմ ի ջաղացին,
Եւ զի սրտիս իմ դառնացած
Ողբն է միայն դիւր սփոփանք։
Փոթորկեալ ծփող ալիք

Խռովեալ նաւակս իմ վարեցին.
 Ջաղաց գտայ նաւահանդիստ,
 Թէ ապրիմ և թէ մեռնիմ,
 Մօտ ի ջաղաց թող թաղեն զիս:
 Լուր տանին, աւետիս տան
 Հեռու և խեռ եղբայրներուս,
 Մեռաւ Մովսէս և թաղեցին,
 Թող հանեն ոխ սրտերէն:
 Ոխն ու վրէժ սահման ունին,
 Մինչև ի մահ և գերեզման:
 Ո՞հ, ես այժմէն կասկած ունիմ,
 Միթէ կարէ մարդ հաւատալ,
 Թէ ապիրատ անհաշտ ոդիք
 Ահեղ ոճիր մտաբերեն,
 Գերեզմանիս հետ խաղալով,
 Անօրինակ վրէժ լուծեն,
 Տէր, մի թողուր, ցրուէ խորհուրդ:
 Այլ ինձ ի՞նչ փոյթ մարմնոյն համար
 Որ չնշաւոր սերմն է ի հող,
 Երբ զգենումք մեք հոգեորն,
 Պօղոսն էր մեք երաշխաւոր:
 Տէր, աղաչեմ, գու ներելով,
 Մի համարիս նոցա այն մեղք.
 Չունիմ արտունջ դՔէն, ով Տէր,
 Թեթև խաչիկ տուիր ինձ բաժին,
 Ոչ մահու փայտ և ոչ բեռու,

Ոչ արիւն ոչ կողին խոց,
 Միթէ պարծիմ ես խաչակիր,
 Միայն արբի քացախ լեզի
 Դառն ու կծու լեզուներէն:

Մի բարեկամ ունէր Մովսէս,
 Շատ ի վաղուց նախածանօթ,
 Նորա անունն էր Մոսիկ,
 Հարուստ էր նա և ջաղցի տէր.
 Սա դրացի էր Մովսիսին
 Եւ միշտ կուգար և կայցելէր,
 Ջաղցի գործեր կարգադրէր,
 Նա ճանաչում էր Մովսիսին,
 Մեծ վարդապետ Հայոց աղդին.
 Երբ տեսնում էր, սիրտ գորսվէր.
 Ո՞հ, եկեղեցւոյ սուրբ վարդապետ
 Ի՞նչ բան ունի ջաղացին հետ:
 Մի օր տեսաւ Մովսէսին դէմք
 Որ շատ տխուր էր և տրտում,
 Հարցուց Մոսիկ իւր մտերիմ,
 Ի՞նչո՞ւ այդչափ, Պատուական Հայր,
 Դու տրտում ես աշերդ ի լաց:
 Ասաց Մովսէս մահս մօտ է,
 Ես անցուցի քան հարիւր ամն,
 Հսպասեցի, ըսպասեցի,
 Եիմէօնի ծերունոյն պէս,

Հայաստանի վրկութեան օր,
Տեսնել մանուկն ի գրկիս,
Միմիթարեալ պաղատէի,
Տէր արձակեա զիմ հոգիս.
Ո՞հ, շտեսած մեռանիմ ես:

Կտակ ունիմ, աղնիւ Մոսիկ,
Նուիրական է իմ կտակս,
Քեզ կաւանդեմ և միայն քեզ,
Դու կատարէ յօժարակամ:
Երբ կը մեռնիմ, թաղէ դու զիս
Մօտ ջաղացի ուռենեաց տակ,
Կանչէ միայն մի քահանայ
Յաշտիշատի տէր Աահակ:
Չեն պիտոյ ինձ հանդէս թաղման,
Ոչ մեռելի գանձ լալտական,
Ոչ շարական որոտնաձայն,
Բաւ է և շատ, ես հաւատամ,
Մի հանդստի Աւետարան.
Թող թաղէ զիս քահանայն
Եւ կնքէ իմ դերեղման:
Մի խաչաքար պարզ և անդարդ
Կանդնէ գլխայս ի յիշատակ,
Այսպէս դրոշմէ արձանադիր:
Աստ հանդշին մաշեալ ոսկերք
Մովսիսի Խորենացւոյն,

Որ ողբաց Հայոց աշխարհ,
Ի վերջն եղաւ նո ջաղացպան,
Եւ թաղեցաւ ջաղացին մօտ.
Որ անցանէք, ով աղդ Հայոց,
Մի մոռանաք, դուք ողորմիս
Մովսիսի ողբացողին:

Մի այլ կտակ էլ կաւանդեմ,
Զմոռանաս եղբայր Մոսիկ,
Իմ անուն և յիշատակ
Ամէն տարի մեռելոցին
Իմ գերեզմանս գու օրհնել տուր,
Յաշտիշատի քահանային.
Եւ մի մուճիկ¹⁾ մաքուր ալուր,
Նուէր արա Սուրբ սեղանին,
Նիշար գործէ պատարագէ,
Յիշէ հոգին խեղճ Մովսիսին:
Իսկ իմ ջաղաց քեզ նուիրեմ,
Յետ իմ մահուս գու տէր լինիս.
Միայն ջաղցի եկամուտէն
Աղքատներուն բաժին հանես.
Կօրհնեմ զքեզ, բարի Մոսիկ,
Որ դու ապրիս երկար ամօք,

1) Մուճիկ, փաքրիկ մի չափ է մաղի նման,
զոր Վանեցի ջաղացպաներ կը գործածեն, ցորեն
աղալու վարձք տռնելու համար:

Քո ջաղացներդ յաջող բանին,
Եւ չկտրի ջուրն յականէն:

Մի օր խռոված ջաղցպան Մովսէս
Ելեր նստեր ջաղցի դլուխ,
Ողջ փոշոտած շնորհալի դէմք
Դուց գուց ջրով կուշտ լուացեր,
Լուացեր և զուարթացեր.
Թուղթն ու գրիչ առեր է ձեռք,
Հետ լացեր է հետ գրել է.
Ողբամ զքեղ Հայոց աշխարհ,
Թափեր արցունք ջրի առուն,
Առուն տարեր տուեր Եփրատին,
Եփրատ տարեր մինչ Ովկիան
Խորենացուն յորդ արտասուս,
Հասեր մինչև Ովկիանոս
Եփրատ, Եփրատ և զիմ կաթել
Խորենացու արտասուաց հետ
Տար և խառնէ քո ջրերուդ:

Անցել, դնացել քան հաղար ամ,
Մովսէս ողբաց Հայոց աշխարհ,
Ողբով կնքեց իւր գերեզման.
Ցեանոց կտակ թողուց ողբեր:
Ո՞վ դու հոգի ողբանուէր,
Հայոց աղդի Երեմիաս,

Նա ողբաց Երուսաղէմ,
Յիսուս ելաց Երուսաղէմ,
Իսկ դու լացիր և ողբացիր
Քո հայրենի Հայոց աշխարհ:
Ո՞ւր ես այժմիկ, թողեր ջաղաց,
Ելար, մոտար լուսոյ կայան,
Ուր գտար դու Սահակ, Մեսրովպ,
Քո անձկալի հոգեոր Հարք,
Դադար առին ողբերդ ու լաց:
Դու լուեցիր, այլ քո ողբերդ
Պիտի խօսին մինչ յաւիտեան.
Հէր չտարար հետ քեզ ողբերդ,
Եւ յետ մահուդ չմոռացար,
Կտակ թողեր մնացոյդաց.
Շարունակէլ, շարունակէլ:
Քո կտակ կատարի միշտ,
Դու մի հոգար, հանգիստ եղեր,
Ողբացեալ Մայր Հայաստան
Ծնանի նա միշտ իւր ողբերդակ:
Շատ են և շատ ձայնարկուք.
Եմ, եմ և ես մի ձայնարկու
Շարունակող ողբերդութեանդ,
Յորշափ շնչէ շունչն ի հոգիս,
Մովսիսի ողբացողիդ
Կտակակատար ՀԱՅՈՅ ՀԱՅՈՒԿ,



ՀՀ Ազգային գրադարան



NL0348370

թթված շաբաթ (մարտի 16-ից
Տե 1820թ. պահ 1908թ. Եղի 27-ին) գ.
34.920

1, Տարզական սպառավոր թթվ.

2, Ալյուր և կանաչ.

3, Պարփակ ըստ մեջ.

4, Հարթակ թթվ Արքայություն.

5, Հարթակ Կայունական թթվ

6, Կար զած.

7, Հայ զած.

8, Չուրփի և թառի.

9, Խոխոչ խթանի